

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԿԱՂԱՆԴ**

Կաղանդ է այսօր, սիրասուն տըղաք,
Օրն է ցնծութեան, խինդի՛, խայտանքի՛,
Պէտք է դադար տաք պահ մ'աշխատանքի,
Ցատկէ՛ք ու պարէք, խնդա՛ք ու խաղաք:

Կաղանդ է այսօր, զըւարթ Ամանոր,
Պէտք է ձեր հոգին հրճուանքով ցնծայ,
Ձեր սիրտն իրարու դուք ըրէք ընծայ,
Որպէսզի պանծաք յոյսով նորանոր:

Կաղանդ է այսօր, բայց ոչ այն կաղանդ,
Սեւ տարիներու դժնէ, անօրէն,
Ուր կը յօշոտուէր Հայն անգըթօրէն,
Ոճրագործներո՛ւ կողմէ նորաղանդ:

Կաղանդ է այսօր, Տօն երջանկաբեր,
Պերճ երազներու լուսազեղ կըռուան,
Նախօրեա՛կն անոյշ ՁԱՅՆԻ ՄԵԾ ՕՐՈՒԱՆ,
Որուն կը սպասեն Հայերն անհամբեր...:

Կաղանդ է այսօր, անցեալն ա՛լ մոռնանք,
Գգուենք սխրանքով մեր սուրբ իտէալ,
Անցեալն մեզ համար մղձաւանջ մ'է ալ,
Փակենք ա՛լ մենք այդ էջն արիւնեւանդ:

Կաղանդ է այսօր, բայց վաղը նորէն,
Պէ՛տք է նըւիրուինք մենք աշխատանքի,
Աշխատութիւնն է Մեծ Օրէնք կեանքի,
Որուն հետեւի՛լ պէտք է կուրօրէն:

Կաղանդ է այսօր, բայց չե՛նք երջանիկ,
Զի օտար ափերն են մեզ ապաստան:
Պէ՛տք է որ թռչինք դէպի ՀԱՅԱՍՏԱՆ՝
Մեր բիւր դարերու անո՛յշ Հայրենիք...:

ԳԷՈՐԳ ՍԻՄՔԷՇԵԱՆ

1920 թ.